12135

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 05 » 10 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0186-21

Ձեռնարկողը՝ ***«Ռ ԵՎ Վ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊ ընկերություն***
ք.Երևան Օրբելի 65

Գործունեությունը՝ ***Շիրազի փողոց 17 հասցեում նախատեսվող «Առևտրային տարածքի» կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք.Երևան, Շիրազի փ.17

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0186-21
<05> 10 2021թ.

«Ռ ԵՎ Վ ԿՈՄՖՈՐՏ» *ՍՊ ընկերության կողմից ներկայացված Շիրազի փողոց 17 հասցեում նախատեսվող «Առևտրային տարածքի» կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*

Ձեռնարկող՝	«Ռ ԵՎ Վ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք.Երևան, Շիրազի փ.17

Ներածական մաս Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի, 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիայի: Նախագծվող հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2518.1 ք.մ, կառուցապատման մակերեսը կկազմի 2518.1 ք.մ: «Առևտրային տարածքը» նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շիրազի փողոց 17 հասցեում: Գործունեության իրականացման տեղամասը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան մասում: Նախագիծը մշակվել է հիմք ընդունելով նախագծման թույլտվություն/ճարտարապետահատակագծային առաջադրանքը և քաղաքաշինության ոլորտում գործող իրավական նորմերի շրջանակը: Հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, ներքին գազամատակարարման ցանցերի և օդափոխությանն համակարգերի ինժենարական լուծումները՝ ըստ ՀՀ գործող շինարարական նորմերի:

Նկարագրական մաս. Նախագծվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2518.1 ք.մ, կառուցապատման մակերեսը կկազմի 2518.1 ք.մ և կբարեկարգվի 1153 ք.մ մակերեսով տարածք, կստեղծվի 242 ք.մ մակերեսով կանաչ գոտի հողամասին հարող հանրային գոտում՝ կառուցապատողի նախաձեռնությամբ, ինչի համար ձեռք է բերվել Երևանի քաղաքապետարանի համաձայնությունը: Կառույցը նախագծվում է երկու վերգետնյան և մեկ ստորգետնյա հարկերից:

Նկուղային/ստորգետնյա հարկը գտնվում է -3900 նիշ բարձրության վրա և ունի 1 818.34 ք.մ մակերես (արտաքին պատերով հաշվարկված), իսկ վերգետնյա հարկերը նախագծվում են 0.0-ական նիշից, 2518.1 ք.մ մակերեսով (արտաքին պատերով հաշվարկված): Կառույցի առավելագույն բարձրությունը +0.0-ական նիշից կկազմի 12.150 մ, մասնավորապես, առաջին հարկը նախագծվում է h=5.15 մ բարձրությամբ, իսկ երկրորդ հարկ՝ h=4.50 մ բարձրությամբ:

«Առևտրային տարածքում» նախատեսվում են 2 աստիճանավանդակներ, 2 մարդատար և 2 բեռնատար վերելակներ, 2 արտաքին մուտքեր և 1 էվակուացիոն ելք, սանհանգույցներ՝ սակավաշարժ խմբերին հարմարեցված, ինչպես նաև թեքահարթակներ մուտքերում: Կառույցի տանիքը նախագծվում է հարթ, որտեղ նախատեսվում են 2 երթիկներ, որոնք կապահովեն նաև երկրորդ հարկի լուսավորությունը: Տանիքը կունենա արտաքին կազմակերպված ջրահեռացում, արտաքին պատերի ճարտարապետական լուծումները նախագծված են ապակեպատ ֆասադներով և ֆիբրո-ցեմենտային սվաղով: Շենքի ջեռուցման և հովացման համար նախատեսված են արհեստական շրջանառությամբ երկխողովականի հորիզոնական մատակարարումով ջերմատարի փակուղային շարժումով համակարգեր: Որպես ջեռուցման և հովացման սարքեր նախատեսվում են կասետային մեկհոսքային և չորսհոսքային ֆանկոյլներ, որոնք տեղադրվելու են հարկերի առաստաղների տակ:

Բնութագրվող տարածքը զուրկ է ծառերից և թփերից, տեղամասում տեղ-տեղ հանդիպում են ինքնաբերաբար աճած խոտածածկ:

Գործունեության տեղամասը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և հնարավոր ռիսկերը գնահատվում են առևտրային տարածքի կառուցման աշխատանքերի ընթացքում, մասնավորապես՝ գործունեության ընթացքում հիմնականում գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ և աղմուկի մակարդակի աճ շինարարական գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ ընդգրկելով ներկայացվող գործունեության տեղամասը:

Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի գործունեության ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը և բնույթը, ինչպես նաև հեռավորությունը զգայուն ազդակակիրներից: Նշված արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրելի նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանման և փոշենստեցման գործողություններ
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ և սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը)

Փոշի առաջացնող նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը: Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով հարևան ազդակակիրների հեռավորությունը գործունեության տարածքից (≥7մ), ինչպես նաև շինարարական աշխատանքները կիրականացվեն ՀՀ թրթռումների գործող նորմերին համապատասխան, ինչը կբացառի ֆիզիկական վնասները հարակից կառույցների վրա, իսկ հնարավոր վնասների առաջացման դեպքում՝ վերջիններս կվերացվեն և կհատուցվեն շինարարական ընկերության կողմից՝ ապահովելով դրանց գոյություն ունեցող/նախնական վիճակը: Ըստ անհրաժեշտության՝ կիրականացվի նաև անմիջապես հարևանությամբ գտնվող կառույցների ֆիզիկական վիճակի գնահատում նախաշինարարական աշխատանքների փուլում: Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա (≥5 խ.մ), որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

Շինարարական հրապարակում կենցաղային աղբը հավաքելու նպատակով կտեղադրվեն աղբամաններ, որտեղից աղբը կանոնավոր կերպով կհեռացվի հանրային աղբամաններ: Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղման գործողությունները կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի բացառվի հրապարակում նյութերի արտահոսքերով պայմանավորված հնարավոր ռիսկերը: Տարածքում չկա բուսահող, ուստի ազդեցություններ բուսահողի վրա չեն գնահատվում:

Ենթածրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) հաշվարկվում է **286.03** հազ. ՀՀ դրամ: Նշված արժեքը ներառում է նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը, իսկ շինարարության փուլում՝ շինարարական աղբի հեռացման, ինչպես նաև կանաչապատման աշխատանքները: ԲՄԾ-ում ներկայացված մնացած միջոցառումները կիրականացնի ենթածրագրի շրջանակում նախատեսվող օժանդակ ծախսերի գումարից:

Փորձաքննական պահանջներ

1.«Առևտրային տարածքի» կառուցման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

2. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
3. Ապահովել շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերումը
4. Հաշվի առնել բնապահպանական մոնիթորինգի ծրագրում պլանավորված մեղմացնող միջոցառումները
5. Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին:
6. Իրականացնել շինհրապարակի համապատասխան բարձրությամբ ցանցապատում, պարբերական ջրցանում, շին հրապարակից դուրս եկող աշխատանքային ավտոմեքենաների անվադողերի լվացում, փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:
7. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար:
8.Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: Շինարարության ավարտից հետո շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանցապատումը և այլն
9. Կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքներ՝ համաձայն կանաչապատման բարեկարգման նախագծի և պլանների: Ձեռնարկել տնկված թփերի, ծառերի, խոտածածկի պահպանում և մոնիտորինգ բուսականության աճն ապահովելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ռ ԵՎ Վ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Շիրազի փողոց 17 հասցեում նախատեսվող «Առևտրային տարածքի» կառուցման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Շ. Կարապետյան